

ՏՆՕՐԵՆ - ԽՐԲԱԳՐԱԳԵՏ  
Լ. ՄԱՍՈՒՐԵԱՆ



Fondateur  
**M. Mamourian**  
Directeur - Rédacteur en chef  
**H. MAMOURIAN**  
ARÉVELIAN NAMOUL.  
JOURNAL ARMÉNIEN  
QUOTIDIEN

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ  
ՏԱՐԵԱՆ 500 ՂՐԸ.  
ՎԵՑԱՍՏԵԱՑ 250  
ԵՐԱՍՏԵԱՑ 150

Բաժանորդագրութիւնը կ'սկսուի  
ամեն ամսոյ 1 ին և 15 ին

ՕՐԱԹԵՐԹ ԱԶԴԱՅԻՆ ԵՒ ՓԱՂԱՔԱԿԱՆ

100 ՓԱՐԱ

100 ՓԱՐԱ

# ՊԱՔՐՃԵԱՆ ԿՏԱԿԸ

«Այսպէս պէտք է անխափան շարունակուի, ամեն անգամ նոր ընտրելի օրիորդներու համար: Երբ վերոյիշեալները իբր աւարտավարժ վերադարձան իզմիր, այն ատեն յիշեալ եկամուտէն պէտք է գումար մը յատկացուի Եւրոպա ղրկելու համար մէկ պատանի և մէկ օրիորդ վերոյիշեալ հանգամանքներով, զորոք էր ինչ-որ մէկ հարկաւոր համար, որպէսզի իբր աւարտավարժ իրենց վերադարձին պարզան պայմաններով պարտաւորուին ազգայնէ երկու վարձարանոց մը»:

Ստորագրուածներն մեզմէ են: Ահա այսպէս կ'ըսէ երջանկալիչատակ Նազարէթ Պաքրճեան իր կտակագրին մը»:

Մինչդեռ պատ. Ուսումն. Խորհուրդը կ'պնդէ և ճարտարարուեստի համար մրցումի կ'հրահարէ թեկնածուները:

Ինչո՞ւ այս պնդումը, ինչո՞ւ այս բացայայտ ցուցմունքէն ետք՝ այս յամառութիւնը:

Այս մասին յարմար չենք դատեր ծանրանալ, որպէսզի մեր նիւթէն չչեղինք, այդ պարագան տարբեր է և այդ մասին այս սինակներուն մէջ արդէն գրուեցաւ և հաւանականաբար դարձեալ գրուի, եթէ պարագաներն հարկեցուցիչ ըլլան:

Միայն տնցողակի պիտի ըսենք թէ՛ այս խնդրոյն մէջ նախագահ Լայր Սուրբ անդամի մը հետ համախորհուրդ, սխալ սկզբուց մըն է որ կ'պաշտպանէ և այս կէտը ցաւ կ'պատճառէ, ամեն անոնց, որոնք մտտէն կամ հետուէն, ժամանակին չփում ունեցած են կտակաւորութիւն հետ և նոյն իսկ այդ կտակաւորութեան մասնակցած:

Ազգի՞ն, վարժանանանց օգուտը պէտք է ամենէ քարձր բռնուի, թէ անհատի մը օգուտը, ահա ինչ որ կուզենք ուսումնասիրել:

Եթէ կտակաւորութիւնն ու կամքին համաձայն այսօր մանկավարժութիւն ուսնելու ղրկուի թեկնածու մը, այդ թեկնածուն երբ մտնուածը կ'սիրէ մանկավարժութիւնն և ուսուցչական ասպարէզը, երբոր վերադառնալ աւարտավարժ եղած, ստիպուած է իր սպինն ծառայել՝ առ ի փոխարինութիւն և օգտակար ըլլալ հայ մտնկալին, իսկ ընդհակառակն ճարտարարուեստի որեւէ ճիւղի մէջ շրջանաւարտ եղող որեւէ երիտասարդ, իր ապագային իր անձնակամին համար միայն օգտուած պիտի ըլլայ և անոր ճարտարապետութեանն, ազգը մտքի չափ չպիտի օգտուի, որովհետեւ մեր վարժարաններուն համար իբրև ուսուցիչ պատրաստուելու համար չէ որ ղրկուած պիտի ըլլայ նախապէս:

Պաքրճեան կտակի մէջ իրաւ է որ ճարտարարուեստի պատրաստելու համար հատուած մը կ'գտնուի, սակայն այս շրջանին համար բացայայտ է, մանկավարժութեան համար ըսուած է, և ցարդ այդ կտակի գործադրութեան գործիչն ի վեր, առաջին անգամն է որ պիտի ղրկուի թեկնածու մը մանկավարժութեան համար, մինչդեռ կտակի սղառն համաձայն արդէն առաջին անգամ Եւրոպա ղրկուած է ճարտարապետութիւն ուսանելու համար երիտասարդ մը, որ այսօր իզմիրի մէջ կ'գտնուի և պաշտօն գտած է, եթէ չենք սխալիր, երկաթուղայ ընկերութեան մէջ:

Արդ՝ բացայայտ, յայտնի անուրանալի է որ կարգը մանկավարժութեանն է, երբ Եւրոպա ղրկուած օրիորդներն վերադառնան, կ'ըսէ, կտակը:

Մանաւանդ ներկայ պարագաներու մէջ մեզի համար ամենակարևոր հարցն որով կ'կարծուիք վարժ ու կարող մանկավարժներ ունենալն է, որոնց պակասը ամեն օր և ամեն վայրկեան զգալի դարձած է: Մենք այսօր մեր աւերեալ հայրենիքն վերաշինելու համար, կրնանք օտար ճարտարագէտներ, մեքենագործներ, հանքարաններ գտնել ու բերել տալ Եւրոպայէ, մինչև մերիններուն այդ զանազան ասպարէզներու մէջ պատկառելի թիւ մը ունենալը, հետևաբար այդ ամենն օտարները կրնան ընել, սակայն չենք կրնար օտար մանկավարժներ, օտար ուսուցիչներ բերել թիւնը մեր վարժարաններն, որպէսզի մեր տղոց՝ մանկավարժական պահանջումներու համեմատ, ուսումն և կրթութիւն շամբեն:

Ասոնք շատ պարզ են և շատ ղիւրբմբռնելի, որով չենք կրնար որեւէ կերպով մեկնութիւն մը տալ Ուսումն. Խորհուրդը հրատարակած պաշտօնական ղեկոյցին, հակառակ ազգային կենսական շահուց, հակառակ օրուան պահանջումներուն, հակառակ իր իսկ՝ Ուսումնական Խորհուրդի կոչումին և մանաւանդ հակառակ Պաքրճեան կտակի ոգւոյն:

Ուսումն. Խորհուրդն կամ այս խնդրոյն մէջ այս սխալ քայլն առնողներն, պէտք է մտածեն սակայն թէ՛ իրենք չեն կրնար՝ իրենց քմահաճոյքին համաձայն մեկնել կտակի արամագրութիւնն, թէ իրենցմէ աւելի բարձր ժողովրդ մը պատասխանատու են, որոնց վստահութիւնն չարաչար կ'գործածեն, իրենց այս անբացատրելի որոշումով:

Անտարակոյս Ուսումն. Խորհուրդը սխալ մըն է որ կ'գործէ և վերջ ի վերջոյ պիտի ուղղէ իր սխալը ու անդրադառնալ անոր վրայ, իսկ եթէ յամառի թաւ հոն՝ ուր կ'գտնուի, չենք կարծեր որ պատ. Քաղ. Ժողովը խնդիրն իր ձեռք չաւնէ և չուղղէ գործուած ազգամտա և կտակի ոգին ղէմ յանդիման տրուած այն տեսակ անտեղի որոշում մը:

Լ. Մ.

## ՀԱՅՅԵԼՔԵՆ ՄԵՋ

Ամեն օր և ամեն վայրկեան կը բազմապատկուի խորհուրդներն ու ժողովները, յանձնաժողովներն ու ամենէ վերջինը հոգաբարձութիւնները: Եւ պիտի գայ օր մը, կասկած չունիմ, որ իզմիրի մէջ գանձուող բոլոր հայերը ժողովի մը կամ խորհուրդի մը անդամ պիտի ըլլան, ամենքն ալ գործի մէջ պիտի գտնուին մինչև որ օր մըն ալ մեքենան կանգ առնէ և մերժէ քալելու:

Այս է իզմիրին վերջին նորութիւնը ամեն մարդ պաշտօնի մէջ, որպէսզի ամեն ոք իր խելքին փափակ կողմն քալէ, և քառօր՝ որ արդէն սկսու ուրուագծուի, կատարեալ և լիար ըլլայ: Ամենավերջինն է Ուսումն. Խորհուրդէ բղխած հոգաբարձու մարմին մը, որու պաշտօնն պիտի ըլլայ վարժարաններու վարչական մասնակարգութիւնն ընել, այսինքն, կտրած թափած ինչ որ կայ շինել, հակվ վարժարաններու աղբիւրներուն, շտրեղու ընթացքի կանոնադրութեան և շրջաբարձներուն բարեօք գործունէութեան վերայ, հոգալ պարսպներու աւելներն ու ամենայնպէս պէտքերը, համբել կըլմանքները, և ամեն զոնապաններու տրուած շնորհներն ու կուսիներու տուփերը, մեղանին գոյնը, քանակը և որակը, թղթին տեսակը և սահունութիւնը, նստարաններուն տախտակներուն գոյնը և ներկի տեսակը, վերջապէս ի՞նչ գիտնամ ամեն բան և կարգ մը բաներ, որոնք հոս մի առ մի շարիւ անյարմար կ'գտանամ:

Իսկ Ուսումն. Խորհուրդը պիտի հակ Ուսումնական մասին վրայ, թէ տեղւոյս և թէ արտարձաններու և թեմերու վարժարաններուն, պիտի քննէ ծրագիրներն, պիտի որոշէ ուսմանց աւանդելու եղանակը, պիտի ուսումնասիրէ ուսուցիչներուն և ուսուցչուհիներուն մտաւարական մանկարդակը, աշակերտներուն և աշակերտուհիներուն ունակութիւններն ու աստիճանը, յատկութիւններն ու տաղանդները, մէկ խօսքով կրթական նախարարական պաշտօնին պատրաստուելու համար ապագայ Հայաստանի մէջ այժմէն վարժութիւններ պիտի ընէ, որպէսզի աւելի լայն ասպարէզի մէջ օր մը յաջողի վարել այդ փափուկ գործը:

Բայց կէտ մը կայ որ զիս կ'յոզեն. ցնէ և մեծ մտտատանջութիւն կ'պատճառէ, մեր Ուսումն. Խորհուրդը անգամներն անձանօթներ չեն ինծի, որոց մէջ բարեկամներ եթէ ունիմ, անհամակիրներ ալ ունենալ կ'կարծեմ, ինչ է գիտէք զիս մտաւտանջող պարագան, մեր Ուսումն. Խորհուրդը երկիւղ ունիմ որ իր կարողութեան շատ բարձր գործի մը հետամուտ ըլլալ կը փորձուի, և զիս պարտաւոր չունի թէ՛ մեր աշակերտութիւնը և մանաւանդ, աշակերտուհիներն ինչ չարածծի է, և ոչ թէ զոնէն, այլ պատուհանէն մարդս փախցնելու կարողութիւնն ունի:

Ուստի բարեկամաբար պիտի խորհուրդ տամ Ուսումն. Խորհուրդի որ իր ուսումնասիրութիւններն նախ մանկապարտէզներու փոքրիկներէն սկսի և անոնց մարմնական թաքրութեան վրայ նախ և առաջ իր վերին հսկողութիւնն ու հեղինակութիւնը ի գործ դնէ: ...

ԼՄ

## Հ. Բ. Ը. Միոնիթիւն

Սոս. Սահմանադրութեան հոգալուծմէն յետոյ, Հ. Բ. Ը. Միոնիթիւն իր մասնաճիւղն ունեցաւ նաև իզմիրի մէջ, ատենապետութեամբ Տօք. Պ. Կոստանդի և անդամակցութեամբ Պ. Պ. Կ. Արապեանի, Մ. Ազնաւորեանի, Ղ. Եսայանի, Յ. Հարէնցի, Մ. Էքիզլէրի, Յ. Ալիբարի և բաւական արդեւանաբեր գործունէութիւն մը ժողովուրդին կողմէ գտնելով համակրութիւն և մեծ ընդունելութիւն մը:

Համաշխարհային պատերազմի մէջ թուրքոյ մասնակցութեան յետոյ, գիտեմք արդէն թէ՛ ի՞նչ որ Պօղոս Նուպարի հետ մտէն կամ հետուէն անշուքիւն ունէր, պէտք է ենթարկուի բոլոր հաւանքի, ինչպէս որ ըրաւ թիւիստի կատարութիւնն ոչ միայն իզմիրի մասնաճիւղն ստիպուեցաւ կասեցնել իր աշխատութիւններն, այլ նոյն իսկ Հ. Բ. Ը. Միոնիթիւն եղած կալուածական նըւէրներն, ինչպէս համակրելի Տօք. Պ. Կոստանդի և նոյնքան յարգելի Մ. Նուպարի կողմէ՝ գրուուեցան տեղական կառավարութեան կողմէ տխմար մըտայնութեամբ մը:

Իսրեքաղտարար արհաւիրքի այդ տխուր ու սև օրերն անցան և այսօր իզմիրցին ի վիճակի է կրկին վերականգնելու իր մասնաճիւղը արդէն գոյութիւն ունեցող մասնաճիւղի անգամներուն միջոցաւ անոնց տարվաքանի մընորիբու աշխատութիւնը միշտ պատկաւ նախագահութեամբ Տօք. Պ. Կոստանդի որ Պ. Մ. Ազնաւորեանի հետ ոչին ու կեանքն կ'ներկայեր անցեալի Բարեգործականի գործունէութեան:

Այս մասին մօտեւ տեղի պիտի ունենայ կառավարական գործն, երբ արդէն պատեն ստիպով մը՝ քաղաքս կ'գտնուի Բարեգործականի ժըրալան և անխոնջ ատենապետը Պ. Վահան Մալգուհան:

Բնականաբար ներկայ յարածուն և անսպաս հանգամանակութեանց մէջ, հազար ու մէկ կարիքներու օգնութեան հասնելու համար Բարեգործականի տեղւոյս վերակազմելու մասնաճիւղն, մեծ ակալուութիւն երով չէ որ գործի պիտի սկսի, այլ պիտի թողու Բարեգործականի նախկին և նորագրեթեք թափանքներուն իրենց կամքին համեմատ ամակալ յարմարագոյն, ըլլալ նոյն իսկ համեստ պատարով մը բերել իրենց մասնակցութիւնը:

Մեր վաղուան թիւով պիտի ներկայացնենք Բարեգործականի գործունէութեան մասին աչքառու ցուցակներ, որոնցմով ուղղակի կերպով ցոյց կ'տրուի թէ՛ ինչ եղած է Բարեգործականի գործունէութիւնն պատերազմի շրջանին մէջ, նաև պիտի հրատարակենք ցուցակ մը Բարեգործականի ունեցած հաստատութեանց զանազան միջավայրերու մէջ:

**Հ Ե Լ Վ Է Ց Ի Ը**  
ՀՐԴԵՂԻ ԶՈՒԿՑԵՐԻՆԿԱՆ,  
ԱՊԱՆՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ,  
Հասցեւորւած 1861թ.  
Անմիջական հասուցում վճարուց  
և նպաստուող պայմաններ  
Ընդհ. ներկայացուցիչ Ի. Պ. Պ.  
ԱԿՏԻՔԱՆ ԵՂՐԱՄԻ







Տեղական Լուրեր

Ամեն տեսակ զորքերն անցան ամենքն ալ ընդունելով իրենց կեցցէն երբևէ Բոլոր զինակից ազգերու զօրականներէն ներկայացուցիչներ կը գտնուէին պաշտօնական օթեակին մէջ: Կարտիսու Մէրսիէ, Իրէկ հասած, ներկայ գտնուեցաւ Ս. Բաթրիքի մայր - եկեղեցիին վերի սեւին վրայէն, այս յաղթանակի մեծ տօնին:

Ազգային Անցուդարձ

Առաջնորդ, Տեղական Տ. Յովնան Ծ. Վրդ. Կարապետեան երէկ քննական այցելութիւն մը ըրած է Իզմիրի Ազգ. երկսեռ վարժարաններուն մէջ, ընկերակցութեամբ ընհ. անորէն Պ. Ա. Կարապետեանի:

— Տեղական հայրը, և Տնօրէն Պ. Ա. Կարապետեան երէկ առաւօտ այցելած են աղջկանց օրբանոցը (նախկին տիւաքօնէզ) և տեսչուհի Ընտրվուտի հետ խորհրդակցած են, որքերու դպրոց ընդունելուն վրայ և որոշուած են մանկապարտէզէ վեր սարիք ունեցող 100 որբուհի ընդունել Ս. Հռիփսիմեանց վարժարանը:

Աղջկանց օրբանոցի տեսչուհի Միս Ընտրվուտի օգնականը, Միս Պըրք փոփաք յայտնած է, ստանձնել Իզմիր հայ մանկապարտէզներու վերակազմութեան գործը: Միս Պըրք փորձ մանկապարտիզականութիւն մը և մանկավարժ մըն է միտնգամայն Այսթամ կը մնայ Պաքսեան մանկապարտէզի պարպումը, ուր ինչպէս յայտնի է, տակաւին կը մնան գաւառներէ փախած հայ ընտանիքներ և կը յուսանք որ, Միս Պըրք ստանձնելով, անոնց վերակազմութեան հարցը, կը կարողանայ անհրաժեշտ բարեկարգութիւնները մտցնել:

— Կը տեղեկանանք թէ Միս Ընտրվուտ մտադրած է աղջկանց օրբանոցին մէջ (Տիւաքօնէզ) բանալ ցերեկեայ դպրոց մը, ուրպիտի ընդունուին միայն մանկապարտէզի տարիք ունեցող տղաքը այն այրիներուն որոնք իրենց աշխատութեան խոչընդոտ կը գառնան Օրական պիտի վճարուի 5 դր., և այդ տղոց պիտի տրուի օրը երեք ճաշ և հագուստ:

Նոյնպէս Միս Ընտրվուտ փոփաք յայտնած է հոգալ Ազգ. երկսեռ վարժարաններու մէջ կարօտ ուսանողներու ցերեկեայ ճաշը Այս կարգադրութեան համար Ազգ. իշխանութիւնները պիտի խորհրդակցին յարգելի տեսչուհիին հետ: Ճաշերու հայթայթումը պիտի կատարուի, ինչպէս մեզ կ'տեղեկացնեն Ամերիկեան Նպաստարարութի կողմէն, որուն օգնելու պատրաստակամութիւն կը յայտնեն ազգ. իշխանութիւնները:

Ե. Բ. ՄԻՈՒԹԻՒՆ

Անլիերէն, Ֆրանսերէն և աս. տրական ստաբիլներու ուսուցումը սկսած է Իզմիրի Երիտասարդաց Քր. Բնասնէական Միութիւնը:

Աւելի ընդարձակ տեղեկութեանց համար զիմեւ իշխաւ ընկերութեան կեղծոտտեղին:

ՀԱՄԱՁԱՆԻ Կ'Ն գրաքննութիւնը բոլոր թերթերու և սպարաններու կը տեղեկացնէ թէ, ամէն կուրսի պրակներու հրատարակութիւնը (Ինչպէս որ նախորդ տարիները ներկայացուցած յայտարարները), համար թեան ջրուելէ աստղ պատք է որ քննութիւն համաձայնական գրաքննութեան կողմէ, ինչպէս թերթերը կը լլան:

ԵՐԵՎԱ, իրիկուան ժամը 10ին, Մէտիթէրանէ տեղեկութիւն մէջ միկնուծի հանդէս մը սարքուած էր ի պատիւ Իզմիր հանդիպող համաձայնական զօրավարներու և ծովակալներու: Հանդէսը, շատ փայլուն եղած է: Երաժշտական, պար իրենց մասնակցութիւնը ըրած են անոր փայլուն Ներկաներու մէջ կը տեսնուէին, անգլիական ստայակոյտէն զօրավար Հէյր Համպլի, քննիչ յանձնատեսիքէն Պիւնո, Տալլուի զօրավարները և ծով. Պրիսթօլ, հրամանատար Ֆից-Մորից, «Ճուրիւն Սէզարէի» հրամանատար Մօնաքօ:

ԻԶՄԻՐԻ յրճուայ մետաղաբարձրանը ինչըրած է վաճառատուններու անօրէններէն ուր իրենց ցուցափեղկերը դրցին: Եղեհանգստեան պաշտօնի տեղաբեւեան միջոցին, որ տեղի պիտի ունենայ այսօր Այսթամի եկեղեցւոյ մէջ ի յիշտակ Պըրիմի, Մակիգոմիտ, Պետրոսպոլ, Ռուսիոյ և Փոքր Ասիոյ մէջ նահատակուող յոյն զինուորներուն:

ԶԻՆՎԱԳԱՐԻ ՊատնՅանձնախումբը որոշած է որ, այն ամէն թուրք հարատակները որոնք կուգին ճամբորդել, պէտք են գրուել, իստան Գանձնախումբին թոյլութեան գիր ստանալու համար: Հրաման պիտի տրուի ամէն անոնց, որոնք պիտի տան թէ ստիպողական է իրենց ճամբորդութիւնը: ԻԶՄԻՐԻ մետաղաբարձրանը, շրջաբերականով մը, Պաշտօնի խանութպաններէն խնդրած էր որ կիրակին պահեն, իրենց խանութները գոցելով: Պաշտօնի, այս շրջաբերականին հետեւանքով, որոշած են կիրակի օրերը հանգիստ ընել և խանութները գոցել:

ՀԻՆՐԱՅԻՆ ստուղապահութեան անօրէնութիւնը հետեւելը կը ծանուցանէ.— Վերջին 24 ժամուան ընթացքին Իզմիրի մէջ պատահած են ճաղիկի 1 թիֆօի 1, մահացու դէպքեր:

Մադիստի մէջ պատահած են ճաղիկի 3 և թիֆուսի մահացու 1 դէպք:

ԾԱՌՈՒ ԲԻՆԱԾ

Ամերիկեան մեծ գաղնակ մը երեք բէտալով, բոլորովին նոր, Բիչմոնտի գործարանին:

Փափաքող կրնան զայն տեսնել Ֆիլիպինսի նորածնութեանց խանութը. բաժան թէնէքիտէս:

ՉԵՐ ծանուցումներուն համար, զիմեղի Ազգի Ընդհ. Գործակալութեան, Պոլիս Կարապ, Մոմ. հանէ, Հասան Փաշա խան, քիւ 18:

ՎԵՐՋԻՆ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

Կ. Պոլիս 27 Սեպտեմբեր 1919

ԱՐԵՆԵԱՆ ՀԱՐՅՈՒ

Ֆրանսական թերթերը կ'զրկեն թէ՛ Արեւելեան խնդրոյն նկատմամբ նախնական բանակցութիւնները աւելի յայտնաբերելու համար մը կ'ստանան Արեւելեան մամուլը միտ կողմէ կ'հաւատակ որ Ֆրանսա և Անգլիա բազմաթիւ կէտերու մասին համաձայնութեան մը յանգած են և թէ այս երկու կառավարութիւններն այս առումին բանակցութիւններն յառաջ կ'ուանին, որպէսզի բարձրագոյն խորհուրդի վերջնական վիճարանութեան պահուէն՝ որ և է թերթիմացութիւններ չունենան:

ԾԵՐԱԿՈՅՏԻՆ ԵՒ ՈՒՒԼՍԸՆԻ ՊԱՅԳԱՐԸ

Նիւ-Եորքէ հասած հեռագրիներ կ'հատուան թէ՛ Վէրսայլի գաղնագրին վաւերացումին կուսակիցներն և անոր ընդդիմագիրներուն միջև պայքարը միշտ կ'ստատարեն կը շարունակուի: Հակառակ գաղնագրի հակապարտերու ի գործ գրած ջանքին, նախագահ Ռիլսըն օրբատօրէ հող կը շահի, նոյն իսկ ծերակոյտի անգամներուն մէջ:

ԱՆՅԱԶՈՂՈՒԹԵԱՆ ՊԱՐԱԳԱՅԻՆ

Ուաշինկթընէ կ'տեղեկացնեն թէ՛ այն պարագային որ ամերիկեան քոնկրէն պիտի մերժէ վաւերացնել հաշտութեան գաղնագրը, Մ. Ռիլսըն ետ պիտի առնէ գաղնագրին օրինակը, կատարուած իրողութիւնէ մը խուսափելու համար:

ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Մասնաւոր լուրերու համաձայն բարձրագոյն խորհուրդը այսօր պիտի գումարուի, իսկ վաղուան խորհուրդը սովորական ժամուան տեղի պիտի ունենայ:

ՖԻՈՒՄԻ ՃԱԿԱՏԱԳՐԻ ՄԱՍԻՆ

«Էքզէն» Ֆիլմի ճակատագրին վրայ գրեւով կ'ըսէ թէ՛ Իտալիոյ գոհացում տարով, պիտի նշանակէ հաստատել հաշտութիւն և բարեկամութիւն Ապագան շուտով ցոյց պիտի տայ թէ Եուրօ-Ալպիներն իրենց հին յուսակցութիւններն մոռնալով, իրենց զօրաւոր զրացիին մօտենալու պիտի աշխատին, որով պէտք պիտի ունենան:

ՖՐԱՆՍԱ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԸ

Ֆրանսական խորհրդարանն կ'շարունակէ հաշտութեան գաղնագրին վիճարանութիւնը: Քիչմանս և Բիչօն ի նպատակ գաղնագրին վաւերացման երկար ճառեր արտասանած են:

ՆԱԽԱՐԱՐՆԵԱՆ ՓՈՓՈՒՍՈՒԹԻՒՆ

Անգլիական թերթերն կ'տեղեկանան որ Լոյս ձօրձ ամսոյս մէջ պիտի վերակազմէ գաղնիքը Պաշտօնադատական կուսակցութեան պատկանող բոլոր նախարարները պիտի քաշուին գաղնիքէն և անոնց տեղ գործաւարական ու ընկերակցական կուսակցութիւններէ անգամներ պիտի հրաւիրուին մասնակցելու նախարարութեանց:

ՏԵՆԻՔԷՆ ՄԻՃՏ ԿՅՆՈՒՆՋԵՆԱՅ

Տէնիքէնի բանակն գրաւեց Քրիստ քաղաքը, բազմաթիւ երկաթուղիներու միացման կեղծոն մը, որ Մոսկուա, 323 քիլօմէթր հարաւարեւմուտք կը գտնուի Ասիոյ գաղնիքէն բանակին հետզհետէ կ'ստատարանայ ուսու զօրապետը իր հրամանին տակ ունի 400 000 զօրք:

ՏԵՆԻՔԷՆ ԵՒ ԱՆԳՂԻՍ

Անգլիա կ'օգնէ Տէնիքէնի անոր հայթայթելով ազգամթերք, համապետ, թանքեր և պիտի շարունակէ անոր օգնել իր բարոյական և նիւթական օժանդակութեամբ: Պոլիսի քննիչը ազատուած երկիրն Տէնիքէնի բանակին կողմէ կ'պարունակէ 30 միլիօնի բնախուժութիւն մը:

ԱՆԳՂՎԱՃԱՌԱԿ Ի ԹՈՒՐԿԻԱ

Լծանոնի կոտորածներէն որոշեց ջնջել կարգ մը սեղմումներ որ արգելք կ'ըլլային Քուրքիոյ հետ տեւեարական յարաբերութեանց վարպետներին:

ԹՈՒՐԿ ԴՊՀԼԻՃԸ

Գանձիմին արասանգոր նիստին մէջ, որ վերջերս տեղի ունեցաւ, Նախաբանայ Խորհուրդը որոշեց իշխանութեան վրայ մնալ մինչև քննարկութիւններու վերջը Այս ընտրութիւններն արգելն սկսած են և այժպէս կ'յուսացուի որ միաբերու հանգարտութիւն պիտի բերվ գաւառներու մէջ:

ՕՍՄՖ ՓՈՒՍԱԳՈՒԹԻՒՆԸ

Օսմ. փոխտուութիւնն տեղի պիտի ունենայ այն ժամանակ, երբ քաղաքական կացութիւնը պարզուի:

ԹՐԱԿՈՅ ԳՐԱԽՈՒՄԸ

Բերիտէ զօրաբանին մը ճամբոյ կրաւ դէպի Տէւալ-Աղաձ իր բոլոր կազմածներով կ'կարծուի թէ այս զօրքերը յատկացուած են թրակիան գրաւելու:

ՈՒՍՄԱՆԻՈՅ ՊԱՐԱԳԱՆ

Համաձայնական Համաժողովին կողմէ Պուքարէնի զրկում պատուիրակը Մր. Քարք, Բարիզ վերադարձած է և հաշտութեան ժողովին յանձնած տեղեկագիր մը, որու վրայ կրկին պիտի ուսումնասիրուի Ռուսոնիոյ պարագան:

ԱՌԻՔԷՆ ՊԱՐՔԷԻ ԵՒ ԵՄՆԱՔ
ԱՐԱՐԱՅԻ ՄԵՐ ԱՆՄԱԶ ՇԵՐՈՍԵՐՈՒ ՓԱՌՔԻՆ ԶՕՆՈՒԱԾ
ԱՂԵՆԱՐՇ ՅՈՒՇԱԳԻՐՔԸ
Պատկերազարդ շինող հետոք մը գոր հեղինակը վերստին լոյս կ'ընծայէ:
ԱՐԱՐԱՅԻ ԱՌԱՋԻՆ ՏԱՐԵԳԱՐՁԻՆ ԱՌՔԻԻ
ԴԻՆԵ ԵՒ 75 ԳՐՈՒՇ
Մի մոռնալ «Արարա»ին օրինակներ նուէր դրկել հայ որբերուն եւ կրթական հաստատութիւններուն
Դիմել՝ ԲԵՆԻՇԵԱՆ ԵՒ ՄԱՄՈՒՐԵԱՆ տպարանները: Ֆրանկոյ թաղ՝
Պ. ՍԱՐԴԻՍ ԳԱԶԱԶՆԱԼԻ ԵՒ ՀԵՂԻՆԱԿԻՆ





ՏՊԱՐԱՆ ԱՐԱՄԻՐԵԱՆ

ԼԵՍՆՈՐԱԾ 1883ԿՆ

ՏՊԱՐԱՆԻՍ մէջ կը տպագրուին զրբեր, զրբոյններ, տետրակներ, յայտարարու-

ժիւններ, հարսանեկան հրաւիրագրեր, զեկուցատուներու յանձնարարներ ևն:

ՏՊԱՐԱՆԻՍ մէջ կը տպուին նամակազուկներ, պանարաններ, հաշուեցուցակներ, ընկալագրեր, վերջապէս վաճառատան մը վերաբերեալ ամեն տեսակ տպագրական գործեր:

ՏՊԱՐԱՆԻՍ մէջ կը տպուին սեղեկագիրներ, էրեկոյժի ելու նամակ-հրաւիրագրեր տոմարներ և վերջապէս տպագրական արհեստին վերաբերեալ ամեն տեսակ գործեր:

ՏԵՄԱԿՆԵՐՈՒ ՊԷՏՈՒՄՈՒԹԻՒՆ

ԱՐԵՎԵԼԵԱՆ ԳՈՅՆԵՐՈՒ

Մաքուր և խճամեայ գործ օրուան գիներու վրայ Տպարանն բաց է առաւօտէ մինչեւ կես գիշեր խնդրակներու համար

Վ Ճ Ա Ր Մ Ո Ւ Ն Ք Կ Ա Ն Խ Ի Կ

ԱՊԱՅՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ

Կրակի դեմ. NATIONAL UNION SOCIETY LTD.

LONDON

CENTRAL INSURANCE CO. LTD.

LONDON

Ծովային. PHOENIX ASSURANCE COMPANY LTD.

LIVERPOOL

Ի ինչ մանրամասնութեանց համար.

ԸՆԳՉԱՆՈՐ ԳՈՐԾԱԿԱԼՆԵՐ L. ԵՒ L. ՎԱՐՊԵՏԵԱՆ

ROYAL EXCHANGE ASSURANCE

ՀՐԴԵՅԻ ԱՊԱՅՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ԸՆԳՉ. ԳՐԾ-ԿԵՐ C. WHITTALL et Co. Ե. ՈՒԹՉՈՒ և ԸՆԿ.

„ԱՐԵՎԵԼԵԱՆ ՄԱՄՈՒԼ“

Թերթիս ծառայը արեւի ընդարձակուած ըլլալով, այժմ ի վիճակի էնք արեւի ընդ սեղ մը սալ ծանուցմանց բաժնին, նոյնիսկ եթէ ամեն օր հարկ ըլլայ միեւնոյն ծանուցումն կրկնել, ինչ որ ասկից առաջ ի վիճակի չէինք ընելու:

Գոնացուցիչ պարսկներ փոքր կամ մեծ, մեկ կամ արեւի ծանուցմանց համար:

Ի ինչ մանրամասնութեանց մինչեւ կես գիշեր:

Վ Ա Ն Խ Ի Կ Վ Ճ Ա Ր ՈՒ Ս

ԴՊՐՈՑԱԿԱՆ ՆՈՐ ԵՐԱՆՈՒՄԻ ԱՐԵՎԵԼԵԱՆ հայերէն և ֆրանսերէն ամէն տեսակ դասագրքեր վնելու համար գինն՝ ԳԱՌՆԻԿ Ա. ԲԱՐՈՒՆԱԿ ԵՒՆԻ, (ՅԼ. ՄԻՔԵՂ ՃԱՍՏԿԱՅԻ. ԳԵՏԵՂԵՐԲ) Յանձնարարութիւնները կը կատարուին փութով և ճշտագահութեամբ:

Յանձնարարութեանց փոխարժէքը կանխիկ է: Նոյն հասցէին պէտք է գրել նաև ունենալու համար հանրաձայնութիւնը և գահան՝ գաշնակահար Պ. Յ. ՍԻՆԱՆԿԱՆԻ բոլոր երաժշտական հրատարակութիւնները, մասնաւորապէս նոր հրատարակած ԲԱՄ ՓՈՐՈՏԱՆ ու ՀԱՄԱՏԱՆԸ:

ՕՆԵԿ Վ. ԹԱՂԵՆԱՆ

Մանգէր, Ուսուցիչ

ՅԱՆՁՆ ԿՈՒՆԷ

Ա. — Անկո — Ստամբուլ գրութեամբ վեց ամսուան մէջ ուսուցանել ֆրանսերէն խօսակցութիւն:

Բ. — Երեք ամսուան մէջ Ֆրանսերէն խօսակցական թղթակցութիւն: Կը խմբագրէ հայերէն և ֆրանսերէն նամակներ և խնդրագրեր:

Կը կատարէ գրաւոր փոխադարձ հարցաւոր թարգմանութիւններ հայ, ֆրանս. և թրք. լեզուներով:

Հասցէ, Այս Երկրի թաղ, Տիլպեր փողոց թիւ 18:

ԹԵՆՏՈՐՈՍ ԲՍԱԽՆՈՒՏԻՍ

ՋՐԱՐՈՒԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆ

ԵՒ ԲԱՂՆԻՔՆԵՐ

Ջրաբուժութիւնը մորթը կը մաքրէ, արտաշնչութիւնը կ'զիւրացնէ արեան շրջանը կը փութացնէ և մարմնոյն անդամալոյծ մասերուն ոյժ և առողջութիւնը կը պարզէ:

Հոգանք ձմեռային } րիւմաթիզմի հմր. տաք ու պողտուշը կ'ինքու և այրելու համար առողջութիւն է:

Բէշտիէ ճտտէսի նոր փառան դէմ մընտըք փողոց թիւ 18-32:

Հազար Փրանք տուելու պատրաստ է, եթէ հաստատել յաղողին թէ վնասակար է առողջութեան համար տուչը:

ՊՈՂՈՍ ԿԱԿԱԶԵԱՆ

ՆՇԱՆԱԳԻՐ (ԱՆՈՒՅՅԸ)

Անի քաղաքի վերջին քաղաքի շէնքերու քաղաքի շէնքերու վրայ

Վաղածանօթ այս վարպետը տարագրութեան հասած քաղաք գործի սկսած է, թէ ճաշակաւոր և թէ օժանդակող գոհացնելու պատրաստ յաճախորդները: Փափաքողք գիտին ԵՆԱՆՓԻ բաժնի, Պ. Մաթիկեանի տպարանը ուր կը գտնուի:

ՄԹԵՐԱՆՈՑ

ՄԻԱՌՈՏԻ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

ՊՆՐՃԱՄՔԻ ԱՐՏԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Արդոյ հասարակութեան կ'ձանուցուի որ ծխախոտի րէժիմի պերճանքի արտադրութիւնները վաճառելու համար մթերանոց մը բացուած է Ֆասուլի հրապարակին վրայ թիւ 73, ուստիկանատան դիմացը:

Այս մթերանոցը հասարակութեան տրամադրութեան տակ պիտի զնէ րենց նշանակեալ ճշգրիտ գիներով պերճանքի յատուկ արտադրութիւնները:

Անոնք կ'բաղկանան ծխախոտներէ և սիկառէթներէ, ձօքէյ-Քիւլպ, Սէրքըլ տը Պոսֆոր, Եէնիճէ, Կրան-Բրի, Էն-Ալա, Սէրքըլ տ'Օրիան, Պաֆրա Մատէն, Ալլա և Կքաթրա-Էքսթրա:

ՅՈՒՇԱՏԵՏՐ

«ՉՈՐԹՈՒՄ» ԱՐՈՒՅԻՆ. ՄԻՈՒԹԵԱՆ Հեղինակ Մըհմէթ Մէլ Կիր. (28 Սեպտ.) ժամը 10.30 Կ. Ա. Գրական-գեղարուեստական հաւաքոյթի Պիտի բանաստեղծ ԲՐՈՑ. Կ'ՊԵՇԿԵՕԹԻՒՆԻՐՆԱՆ, ներք ունենալով ձեռագիրը:

Ն. ՆԵՐՄԵՍԵԱՆ (16)

ԿՐՕՆ

ԱԶԳՈՒԹԻՒՆ

Մէկը գերազանցութիւնները խոնարհեցնելու ընտրեալներու թռիչքը անգամալուծելու համար հաւասարութեան կը փակի, միւսը կատարելապէս ազատ կը թողու օրինաւոր մրցումի կազմ և պատրաստ բոլոր կորովները, որպէսզի իրենց թեղմանը գործունէութեամբ համարձակօրէն ի հանդէս գան:

Արդ, նկատելով որ ծառերու փոտած մասերը մտքերու և արմատաքի գարմանելու համար հարկ չէ զանոնք արմատախիլ ընել:

Նկատելով որ հաւաքական գործարանաւորութիւնները բազմամասն և հանրային կեանքի ներդրելը շատ փափուկ են:

Նկատելով որ աւանդութիւնները պահպանումի կարեւոր գաղտնիքներ և կրօնն ու հաւատը՝ ցեղերու տեւականութեան ծառայող կենսատու ոյժեր կը պարտնակեն:

Նկատելով որ բնութեան մէջ ուսուցանուած չի կայ:

Վերջապէս նկատելով որ օգտակար բարեշրջումները բնութեան արգիւնք չեն եղած երբեք:

Այս և ուրիշ նկատումներով կը պարտաւորինք արմատական բլլալ ճանչնալու մէջ ընկերային հիւանդութիւններն ու քաղաքական շարիքները և անոնց պատճառները, և սակայն զգուշաւոր և պահպանողական բլլալ այդ արտերը բուժելու պարտաւոր:

Ազգային արդի կացութեան ստղն արեւի մասնաւորելով խօսքը կընամ ընել, թէ մօտաւոր ապագայի մէջ ո'րչափ և արեւի կամ նուազ ինչ աստիճանի ալ իրականացած բլլալն մեր բաղձանքները, անհամեմատօրէն պիտի շատան և լուրջ հանգամանք պիտի ստանան պարտաւորութիւնները, զանոնք հոս միտումի թուել կարելի չէ, վասնզի բազմաթիւ և զանազան ճիւղերու կը պատկանին, կը բաւէ քանի մը կարեւորագոյններուն և էականներուն ակնարկութիւններ ընել:

Օտարները՝ մեր վրայ նշարած են ընդհանրապէս երեք գլխաւոր թերութիւններ, որոնց մասին յատուկ առաձններ և աստիճաններ ունին:

Առաջին՝ անխոհեմութիւն, երկրորդ՝ ցուցամուտութիւն, երրորդ՝ անփափուկութիւն:

Կրօնը՝ հազարաւոր տարիներէ ի վեր մեզի կը պատուիրէ միաբնակ միանգամայն խորագէտ բլլալ, մենք դեռ կը յամարենք խառնաշփոթ խորհուրդներով ճանձարամիտ մտալ: Արգիւնքէն աւելի համբաւին կը յարինք, իրականէն աւելի երեւակայականին կը փարինք, շուտ կը վառինք, շուտ կը մարինք. զոչումի յոյսը, զգաստութեան լոյսը կը պակսին մեզի, բազմադարեան տառապանքներ, յուսախաբութիւններ և փորձեր չիկրցան մեզ շրջահայեաց, իրատես և հեռատես ընել:

Ցուցամուտութեան գրգռած նախաձները և սնուցարժութեան հասուցած շարիքները մեր ներքին և արտաքին պատմութեան մէջ բաւական սէղներ կը գրաւեն. փոտամոլ հակումներու իբր հետեանք պարագլուխ հանդիսանալու և նախաթոք բազմիւրու մասին սնուցուած իղծերը գոյութիւն տուած են խառնակ բազմապետութիւններու, որոնց հակընդդէմ հասանքները ծառայած են երկպառակութեան ծաւալման և փոխադարձ փճաման, այսինքն արեւի քանդումի քան թէ շինութեան:

Ասոնց դարմանը կը գտնուի հիւնովին համեստութեան մէջ, զոր ճշմարտապէս կրնան ունենալ միայն ա-

նոնք. որ վերապէս իմացականութեան հաւատքով սնած զԱյն բոլորանուէր կը պաշտեն:

Փափկանկատութեան, կիրթ ճաշակի և ազնիւ վարմունքի պակասն ալ շատ հակակրօնութիւններ հրաւիրած են մեր վրայ: Երանի՜ թէ դպրոցական ծրագիրներու մէջ կարեւոր տեղ մը տրուէր կենցաղագիտութեան դասերուն, և միանգամայն մասնաւոր ուշադրութեան առնուէր թէ վարքերը չին կրնար փայլիլ առանց բարքերը բարեոքելու, և բարոյականը կրօնով միայն կրնայ էական նուիրագործուիլ:

Ասոնց նուիրական ոգեխառնութեան (attachement sacre) մը, անկարելի է բարի միտք և ազնիւ սիրտ ունենալ և լաւ տպագրութեան և մեծարանքի զգացման տակ թողուլ ուրիշները:

Անոնք որ կարհամարհեն իրենց նուիրականութիւնները, այլևս իրաւունք չեն ունենար ուրիշներէն առ այդ յարգանք պատանելու:

Նմանօրինակ կացութիւններու մէջ է որ ապագայ պետական կազմին հետապատկերը կը ներկայանայ: Անիկայ իհարկէ ժողովրդագիտական (democratique) պիտի ըլլայ:

Շարժանկէ